

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___» _____-ի 2016 թվականի N ___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՆԴԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 7-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գնդեվազ համայնքի Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը ու դրա հիման վրա ենթակառուցների շինարարությունն ու գործարկման հեռանկարները՝ սույն որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ֆիզիկական անձանց պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.975 հեկտար հողերի նկատմամբ, ըստ սույն որոշման N 2 հավելվածի հատակագծերի, ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ հետևյալ հիմնավորումներով՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերից, քանի որ՝

ա. Ծրագիրն ընդերքօգտագործմա բնագավառում ունի համապետական կարևոր նշանակություն.

բ. Ծրագրի իրականացումը կապահովի Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի և արտահանման ծավալների էական աճ,

գ. Ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանը.

դ. Ծրագրի իրականացումը լուրջ խթան է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար, քանի որ ծրագրի իրականացման շրջանակներում էապես բարելավվելու տարածաշրջանի՝ ենթակառուցվածքներով ապահովվածությունը (ծրագրի շրջանակներում

կառուցվելու են նոր, արտադրական ենթակառուցյցների համակարգեր), որի հիման վրա հնարավոր կլինի իրականացնել տնտեսական զարգացման նոր ծրագրեր.

2) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց նշված սեփականության օբյեկտների օտարման, քանի որ՝

ա. հանքավայրի շահագործման, հանքաարդունահանման նախագծով անհրաժեշտ աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ կենսական կառույցները այլ վայրում տեղակայելու դեպքում անհնար է ծրագրով նախատեսված լուծումների գործնական իրականացումը.

բ. օտարվող սեփականության օբյեկտների տարածքներում և (կամ) դրանց անմիջական հարևանությամբ գտնվող տարածքներում իրականացվելու են հանքավայրի շահագործման և (կամ) շինարարական աշխատանքներ.

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետով սահմանված տարածքների ձեռքբերող է հանդիսանում «Գեոթիմ» փակբաժնետիրական ընկերությունը.

2) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետ է սահմանվում սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 2 /երկու/ ամիս.

3) սեփականության օտարման գործառույթների իրականացումը համակարգող պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանն է.

4) սույն որոշմամբ սահմանված ձեռք բերողի իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ձեռք բերողի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի միջև կնքված և սույն որոշմանը կցված պայմանագրին համապատասխան:

3.Գերակա հանրային շահ ճանաչված տարածքների և դրանցում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման աշխատանքներ նիրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 25-ի N 108-Ն որոշմամբ հաստատված՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում առկա սեփականության նկարագրության արձանագրության կազմման կարգով և նկարագրության արձանագրության օրինակելի ձևով.

4. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 7-օրյա ժամկետում որոշումը պատշաճ ձևով ուղարկել օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ապահովել սույն որոշմամբ սահմանված բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքների նկատմամբ սույն որոշումից բխող սահմանափակումների պետական գրանցումը՝ օրենքով սահմանված կարգով ու ժամկետում՝ սույն որոշմամբ սահմանված տարածքները ձեռք բերողի սեփական միջոցների հաշվին.

5. Սույն որոշմամբ սահմանված կարգով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված սեփականության նկատմամբ սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում՝ սույն որոշմամբ սահմանված ձեռք բերողի սեփական միջոցների հաշվին.

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՆԴԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱԶՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐ

	հողամասի ծածկագիրը	հողատեսքը	հողամասի մակերեսը	Սեփականատիրոջանուն, ազգանուն
1	10-016-0224-0035	Գյուղատնտեսական վարելահող	0.1106	ՍասունՀարությունյան
2	10-016-0226-0007	Գյուղատնտեսական վարելահող	0.365	ՍասունՀարությունյան
3	10-016-0224-0071	Գյուղատնտեսական վարելահող	0.3378	ՄխիթարԱրշակյան
4	10-016-0222-0027	Գյուղատնտեսական վարելահող	0.1616	Սոնյա Հարությունյան Գրիգորի, Մարետա Հարությունյան, Ռուզաննա Հարությունյան, Սոնյա Հարությունյան
		Ընդամենը	0.975	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ